ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 06 >> << դեկտեմբերի >> 2018թ. N 405

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԻՆԱ, ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ԵՎ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի երրորդ մասով, 98-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարար Ս. Պապիկյանի՝ 2018 թվականի օգոստոսի 22-ի թիվ 01/17.1/6465-18 հանձնարարականը՝ Ոսկեհատ, 2018 թվականի օգոստոսի 28-ի թիվ 01/17.1/6644-18 հանձնարարականը՝ Լուսագյուղ և 2018 թվականի օգոստոսի 28-ի թիվ 01/17.1/6670-18 հանձնարարականը՝ Արգինա համայնքներում արտապլանային կարգով իրականացնել իրավական և մասնագիտական հսկողություն.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգինա, Լուսագյուղ և Ոսկեհատ համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը, իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբերի կազմերը՝ համաձայն NN1-2 հավելվածների:
2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N1/32.1/727-16 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական աշխատանքային խմբերում ներգրավել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց /համաձայնությամբ/:
5. Աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ չորրորդ եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:
7. Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտում ընդունման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 06.12.2018 13:34:58 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2018 թվականի դեկտեմբերի 06 -ի
N 405 որոշման

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

h/h	Համայնքի անվանում	Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը	Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ	Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Ոսկեհատ համայնք	10 աշխատանքային օր		Աշխատանքային խմբի ղեկավար՝	
			1. Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական և պետության պատվիրակված լիազորությունների պարտադիր լիազորությունների բնագավառ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժն պետի ժամանակավոր պաշտոնակատար	Լ. Նիկողոսյան
				Աշխատանքային խմբի անդամներ՝	
			2. Քաղաքաշինության բնագավառ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ	Ս. Թովմասյան
			3. Հողօգտագործման բնագավառ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ	Ս. Սարգսյան
2.	Արգինա համայնք	5 աշխատանքային օր			

				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար	Ա. Սարգսյան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի գլխավոր մասնագետ	Ա. Ղորղանյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 06.12.2018 12:56:26 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2018 թվականի դեկտեմբերի 06 -ի
N 505 որոշման

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

h/h	Համայնքի անվանում	Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը	Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ	Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Լուսագյուղ համայնք	5 աշխատանքային օր	1. Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական և պետության պատվիրակված լիազորությունների բնագավառ 2. Քաղաքաշինության բնագավառ 3. Հողօգտագործման բնագավառ	Աշխատանքային խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համայնքային համակարգման բաժնի պետ Աշխատանքային խմբի անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ	Գ. Գևորգյան Ա. Մուրադյան Ռ. Երվանդյան

				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության առաջատար մասնագետ	Ս. Չալյան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ	Ս. Սաֆարյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

06.12.2018

X

VERIFIED OCSP 06.12.2018 12:57:01 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217